Ազգ
Azg
27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013 ՈՒՐԲԱԹ 163(5246)
ISSN: 1829-1651
9 771829 165003 13163

# Ասադը չի բացառում ԱՄՆ-ի հարձակումը նույնիսկ քիմիական զենքի ոչնչացումից հետո

**Սիրիայի նախագահ Բաշար Ասադը հարավամերիկյան 10 երկրների համար իսպաներեն եւ պորտուգալերեն տված հարցազրույցում չի բացառել ԱՄՆ-ի հակասիրիական գործողության հնարավորությունը նույնիսկ Սիրիայի քիմիական զենքի ոչնչացումից հետո:**



**Ասադի խոսքերով՝ 1950-ական թվականներից ԱՄՆ-ի մղած բոլոր պատերազմները եղել են նրա ագրեսիվ քաղաքականության արդյունքը: Կորեայի, Վիետնամի, Լիբիայի, Սոմալիի, Աֆղանստանի եւ Իրաքի պատերազմներից բացի՝ Վաշինգտոնը նաեւ նախապատրաստել է պետական հեղաշրջումներ Լատինական Ամերիկայում, որոնց հետեւանքով սպանվել են միլիոնավոր մարդիկ:**

**Խոսելով Սիրիայի իրադրության մասին՝ նախագահը երկյուղ է արտահայտել, որ ընդդիմադիր խմբավորումների գրոհայինները ՄԱԿ-ի տեսուչներին կխանգարեն իրականացնել քիմիական զենքի հավաքման եւ դրա հետագա ոչնչացման առաքելությունը:**

**Ասադը պատմել է, որ Սիրիայի իշխանությունները գրոհայինների մոտ հայտնաբերել են «մարտական քիմիական նյութերի պարկուճներ եւ այդ նյութերի մշակման լաբորատորիաներ»: Քիմիական գրոհներին ընդդիմության մասնակցությունը վկայող այդ բոլոր ապացույցները փոխանցվել են ռուսաստանցի դիվանագետներին:**

**Ինչ վերաբերում է սիրիական բանակի քիմիական զինանոցներին, Ասադը հավաստիացրել է, որ դրանք խիստ վերահսկողության տակ են:**

# Սադրա՞նք, թե՞ մկանների ցուցադրում



Մեկ օր առաջ Մեղրի-Երեւան միջպետական ճանապարհի Լիճքի հատվածում տեղի ունեցածը մտորելու տեղիք է տալիս: Մեր ռազմավարական գործընկեր երկրի սահմանապահ ներկայացած, ազգությամբ ռուս անձինք անհարգալից են վարվել Հայաստանի քաղաքացիների, ավելին, հայ պատգամավորի՝ Զարուհի Փոստանջյանի հանդեպ, տեսախցիկ կոտրել, տեղաշարժ խոչընդոտել (Զ. Փոստանջյանն ու նրա կուսակիցները գնում էին Սյունիքի թիվ 38 ընտրատարածքում տեղի ունենալիք արտահերթ ընտրություններին առաջադրված իրենց կուսակցի քարոզարշավին): Երկրի ներսում ինչո՞ւ են անկախ երկրի քաղաքացիներին կանգնեցնում ռուս սահմանապահները, սա միգուցե հենց Հայաստանի համապատասխան մարմինների բացթողումն է, որոնք ռուսների ներհանրապետական անելիքներն իրենք պետք է անեին ու այդպիսի իրավիճակ թույլ չտային՝ փոխգործակցության պայմանավորվածություն կա, չէ՞: Նույնիսկ այն դեպքում, երբ ռուս սահմանապահները հետախուզվող անձ են փնտրում, դա պետք է անեն մեր համապատասխան ծառայությունների հետ եւ ոչ թե ինքնադրսեւորվեն:

Ի՞նչ է սա. եթե սադրանք է՝ հատկապես ո՞ր, հայկական, թե՞ ռուսական կողմին է պետք եղել, անձերի՞, թե՞ ծառայությունների մակարդակով է սադրանքը ստեղծվել: Անկախ նրանից, որ երեկ մեր լրատվամիջոցները պաթոսով եւ արդարացի դատապարտում էին այն իրողությունը, թե՝ ինքնիշխան երկրի ներսում այլ պետություն ներկայացնող անձինք նվաստացրել են Հայաստան պետության քաղաքացիներին, փորձենք հասկանալ, թե ինչո՞ւ է հնարավոր եղել նման բան:

*Տես էջ 3*

# Հեռացավ հայ թատրոնի Նահապետը



Կյանքի 83 տարեկանում մահացավ հայ թատրոնի եւ կինոյի ականավոր դերասան, ԽՍՀՄ եւ ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, ՀՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր, Համազգային թատրոնի հիմնադիր ղեկավար, Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի կառավարման խորհրդի նախագահ Սոս Սարգսյանը:

Հայ թատրոնի ու կինոյի հպարտություններից մեկը, մեծ մարդ ու արտիստ:

Ընդամենը մի քանի շաբաթից՝ հոկտեմբերի 24-ին, վարպետը կդառնար 84 տարեկան:

Շատ կկարոտենք քեզ, վարպետ:

# Քննարկվեց օդանավակայանի հին շենքը քանդելու հարցը

Հայաստանի քաղավիացիայի գլխավոր վարչությունը վերջերս դիմել էր Հանրային խորհրդին՝ տեղեկացնելով, որ կառավարությունը եւ «Զվարթնոց» օդանավակայանի կառավարիչ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերությունը քննարկում են օդանավակայանի առաջիկա 5 տարիների զարգացման խնդիրները եւ անհրաժեշտություն է առաջացել վերջնական գնահատական տալու հին ուղեւորային համալիրի հետագա պահպանման կամ քանդման խնդրին:

*Տես էջ 2*




# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

**Բանաստեղծ Արտեմ Հարությունյանի 70-ամյակին՝ Ալեքսանդր Թոփչյան. «Ժամանակի հետ, ժամանակից առաջ»:**

**Հասմիկ Պապյանի երեւանյան վերջին համերգից հետո. Անահիտ Հովսեփյանի զրույցը երգչուհու հետ:**

**Շուշանիկ Ափոյանի հրապարակումը՝ նվիրված դաշնակահար Արամ Թաթուլյանի 100-ամյակին:**

**Հովհաննես Փիլիկյանի անդրադարձը Արթուր Օշականցու նկարչությանը (թարգմ.՝ Հակոբ Ծուլիկյան):**

**Ռոմեն Կոզմոյանի «Բեյրության օրագիրը» շարքից. «Աստված, մի լքիր Լիբանանը»:**

**Ճապոնական մշակույթ. «Օրիգամի», ներկայացնում է Անի Մագումյանը:**

**Ս. Բ.**

# Ի՞նչ է ակնարկել Մամեդյարովը

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հերթական նստաշրջանին Ադրբեջանը ներկայացել է ԱԳ նախարար Մամեդյարովի մակարդակով: Հարեւան երկրի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի՝ Նյու Յորքում հանդիպումների մասին տեղեկատվությունը բավական սուղ է: Հայտնի է, որ Մամեդյարովը հանդիպել է Ամերիկայի հրեական կազմակերպությունների ղեկավարների հետ: Պաշտոնական հաղորդագրության մեջ ասված է, որ կողմերը «կարեւորել են Ադրբեջանում ավանդական էթնիկ եւ կրոնական հանդուրժողականությունը, քննարկել իսրայելա-ադրբեջանական հարաբերությունները, անդրադարձել տարածաշրջանային զարգացումներին»:

Ինչ խոսք, արտառոց է, որ Ադրբեջանի ԱԳ նախարարն իր երկրի եւ Իսրայելի հարաբերությունների հարցը քննարկում է ԱՄՆ հրեական կազմակերպությունների հետ կամ նույն ձեւաչափով անդրադառնում «տարածաշրջանային զարգացումներին»: Տպավորություն է ստեղծվում, որ Իսրայել-Ադրբեջան հարաբերություններում վերջերս ծագել են «պարզաբանման կարիք ունեցող» խնդիրներ, որոնք, սակայն, պաշտոնական Բաքուն փորձում է հարթել ոչ թե ուղղակի, այլ՝ միջնորդավորված բացատրություններով: Մամեդյարովն, ամենայն հավանականությամբ, ԱՄՆ հրեական կազմակերպությունների միջոցով Իսրայելին պարզաբանումներ է տվել Իրան-Ադրբեջան վերջին շփումների վերաբերյալ:

Ադրբեջանի ԱԳ նախարարը Նյու Յորքում մասնակցել է նաեւ այսպես կոչված «Կասպյան համաժողովի» շրջանակներում քննարկումներին: «Թրենդ» գործակալության փոխանցմամբ, Մամեդյարովը հիմնականում խոսել է «Հարավային գազային միջանցքի» թեմայով: Սա մի նախագիծ է, որ ծրագրվում է ավարտին հասցնել 2019-ին: Ըստ կանխատեսումների, ծրագրի հաջողության դեպքում ադրբեջանական գազը կհասնի Եվրոպա: Այդ նպատակով ստեղծվել է կոնսորցիում:

*Տես էջ 8*

# Պետությունը կերաշխավորի հիփոթեքային վարկի 30 տոկոս կանխավճարը

## *Բնակարան ձեռք բերելու ցանկություն ունեցող պետական ծառայողների համար*



Խոսելով շինարարության ոլորտի եւ շարունակվող անկման ցուցանիշների մասին՝ կառավարության նիստի ժամանակ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** ներկայացրեց նոր առաջարկներ, որոնց իրականացումը կաշխուժացնի այս ճյուղը, բավարարելով ոչ էլիտար բնակարան ձեռք բերելու ցանկություն ունեցողների պահանջը: Ըստ վարչապետի՝ շինարարության շարունակվող անկումն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ էլիտար բնակարանների պահանջարկը նվազել է: «Մյուս կողմից, մենք տեսնում ենք, որ պահանջարկ կա էկոնոմ դասի բնակարանների նկատմամբ, բայց առաջարկը մեծ չէ», ասաց նա:

Կառավարությունը 2014-ին սկսելու է պետական ծառայողների համար բնակարանները հասանելի դարձնելու ծրագիրը: Տիգրան Սարգսյանը նշեց, որ ներկայումս թիվ մեկ խոչընդոտն այն է, որ հիփոթեքային ցանկացած սխեմայով կանխավճար է պահանջվում: Մինչդեռ շատ հաճախ պետական ծառայողները չունեն կանխավճարի գումարը եւ չեն կարողանում բնակարան ձեռք բերել, որի արժեքը մինչեւ 25 մլն դրամ է: «Մենք պատրաստ ենք պետական ծառայողներին տրամադրել պետական երաշխիք այդ 30 տոկոսի չափով, որպեսզի բանկերը նրանցից չպահանջեն 30-տոկոսանոց կանխավճար: Ուսումնասիրությունը, ինչպես նաեւ կառուցապատողների առաջարկությունները ցույց են տալիս, որ դա էապես կարող է ավելացնել պահանջարկը», հավաստիացրեց վարչապետը:

Մինչ ծրագրի իրականացումը պետք է կազմվեն պետական այն ծառայողների ցուցակը, ովքեր ցանկություն ունեն այդպիսի հիփոթեքային վարկ ստանալու: Այդ նպատակով կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի գլխավորությամբ ստեղծվելու է աշխատանքային խումբ:

Միաժամանակ, Տիգրան Սարգսյանը դիմեց Երեւանի քաղաքապետարանին՝ խնդրելով, որ Երեւանում հարմար տարածքներ գտնվեն կառուցապատողներին տրամադրելու համար, «որպեսզի ավելի ցածր գներով հնարավոր լինի Երեւանում կառուցապատում իրականացնել»: «Դա նշանակում է, որ մենք որակապես փոխելու ենք շինարարական տեխնոլոգիաները: Եթե մինչեւ հիմա այն շինարարական տեխնոլոգիաներով, որոնք կիրառվում են, ենթադրվում է, որ 1 քմ-ի արժեքը տատանվում է 800 դոլարի շրջանակում, մենք նպատակ ունենք մոտակա տարիներին առաջարկել կառուցապատողներին՝ կիրառել էկոնոմ դասի տեխնոլոգիաներ, որոնք էապես պետք է նվազեցնեն ինքնարժեքը: Դա նշանակում է, որ նաեւ հողի արժեքի առումով պետությունը պետք է օժանդակի, որպեսզի էապես նվազեն գները, որպեսզի ավելի շատ մարդիկ հնարավորություն ունենան բնակարան ձեռք բերելու», շարունակեց վարչապետը եւ շեշտեց, որ այդ աշխատանքները պետք է ավարտվեն մեկ ամսվա ընթացքում, որպեսզի պետական բյուջեի քննարկման ժամանակ Ազգային ժողովում այս ծրագիրը ներկայացվի ավելի մանրամասն:

«Օտարերկրացիների մասին» օրենքում կառավարության առաջարկած փոփոխության նպատակը եւս շինարարությունը ակտիվացնելու համալիր ծրագրի մի մասն է: «Եթե օտարերկրացիները Հայաստանում բնակարան են ձեռք բերում, մենք նրանց համար կարճ ժամկետում ստեղծում ենք հարմարավետ միջավայր, որպեսզի այդ մարդիկ վստահ լինեն, որ արագորեն կստանան կացության վկայական եւ երկիր մուտք գործելու որեւէ խնդիր չեն ունենա: Միջազգային փորձն էլ վկայում է, որ անշարժ գույքի ձեռքբերումը եւ կացության վկայականը միասին տալու դեպքում ավելի հարմարավետ պայմաններ են ստեղծվում համանման գործարքներին մասնակցելու համար», տեղակացրեց Տիգրան Սարգսյանը:

# Վնասով աշխատող պետական ձեռնարկությունների տնօրենները կազատվեն աշխատանքից

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 35-րդ հոդվածի մասերից երկուսը անվավեր ճանաչվելու մասին երեկ ընդունած կառավարության որոշմանն անդրադառնալով՝ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** խոսեց պետական կամ պետական մասնակցությամբ ձեռնարկություններում տիրող վիճակի մասին:

«Պարզվում է, որ կան դեռեւս ձեռնարկություններ, որոնք աշխատում են վնասով, եւ մեր ներկայացուցիչները կամ նախարարությունները պատշաճ վերահսկողություն չեն իրականացնում: Մենք պետք է էապես խստացնենք մեր պահանջները նման ձեռնարկությունների նկատմամբ. եթե պետական ձեռնարկությունն աշխատում է վնասով, անհապաղ պետք է փոխել տնօրենին: Եթե չկա հիմնավոր բացատրություն՝ ինչ պատճառով է պետական ձեռնարկությունը կամ պետական մասնակցությամբ ձեռնարկությունն աշխատում վնասով, դա անհապաղ պետք է դառնա մեր քննարկման առարկան: Մենք մեր պետական սեփականությունը պետք է արդյունավետ կառավարենք», ասաց վարչապետը: Մանրամասները պարզաբանելով՝ վարչապետն հայտնեց, որ դրա համար սահմանվելու են համապատասխան վերահսկողական մեխանիզմներ, որպեսզի այդ գործընթացը ավտոմատ կերպով լինի:

Տիգրան Սարգսյանը որպես օրինակ բերեց ամբուլատորիաներն ու պոլիկլինիկաները, որոնք անցնում են համայնքային ենթակայության ներքո եւ սկսում են աշխատել վնասով: «Մենք պետք է խնդրենք համայնքի ղեկավարներին, որ դա դարձնեն քննարկման առարկա, եւ եթե նրանք ի վիճակի չեն պատվիրակված ֆունկցիաներն իրականացնել, ապա ավագանիները որոշում ընդունեն եւ այդ սեփականությունը հանձնեն պետությանը: Հակառակ դեպքում անթույլատրելի է պարտքի կուտակումն այն ձեռնարկություններում, որոնք ստանում են 100 տոկոս պետական ֆինանսավորում», եզրափակեց վարչապետը: **Ա. Մ.**

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

# Հայաստանի արտգործնախարարը ելույթ ունեցավ Հարվարդի համալսարանում

**Սեպտեմբերի 25-ին աշխատանքային այցելությամբ Միացյալ Նահանգներում գտնվող արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Հայաստանի արտաքին քաղաքականության մասին ծավալուն ելույթով հանդես եկավ Հարվարդի համալսարանի Ջոն Քենեդու անվան կառավարման դպրոցում:**



**Նախարարի ելույթին ներկա էին Հարվարդի համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, հետազոտողներ, քաղաքագետներ, վերլուծաբաններ:**

**Նախարար Նալբանդյանն իր ելույթում եւ հարցերի պատասխաններում ներկայացրեց հայ-ամերիկյան հարաբերությունները, ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ Հայաստանի եւ միջազգային հանրության ջանքերը, սիրիական ճգնաժամի եւ դրա հանգուցալուծման ուղիների, միջազգային եւ տարածաշրջանային մի շարք խնդիրների վերաբերյալ Հայաստանի մոտեցումները:**

**Ելույթից առաջ Էդվարդ Նալբանդյանը հանդիպում ունեցավ Հարվարդի համալսարանի մարշալ Ջեֆի Օ՛Նիլի հետ: Հանդիպմանը քննարկվեցին հեղինակավոր կրթօջախում հայազգի ուսանողների առավել ներգրավման հնարավորությունները:**

**Հարվարդում նախարար Նալբանդյանը նույն համալսարանի պատվավոր պրոֆեսոր, բժշկական ֆակուլտետի բազմամյա դեկան Էռնեստ Բարսամյանին հանձնեց ՀՀ նախագահի շնորհած «Մխիթար Հերացի» մեդալը:**

**Նույն օրը Էդվարդ Նալբանդյանը մեկնեց Նյու Յորք՝ մասնակցելու ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանի աշխատանքներին:**

# Քննարկվեց օդանավակայանի...

*1-ին էջից*

**Քաղավիացիայի վարչությունը Հանրային խորհրդին առաջարկել է համատեղ քննարկել հարցը: Ինչպես նշում է Ճարտարապետների միության նախագահի Մկրտիչ Մինասյանը՝ առաջին անգամ է, որ քննարկում կազմակերպվում է մինչ շենքը քանդելը: Ըստ նրա՝ որեւէ շենքի համար էլ կարելի է պատճառ գտնել ու քանդել այն, սակայն շենք պահելն է դժվար:**

**Երեկ Հանրային խորհուրդը կազմակերպել էր քննարկում, որի ժամանակ խորհրդի ավիացիայի հարցերով ենթահանձնաժողովը բացասական եզրակացություն տվեց «Զվարթնոց» օդանավակայանի հին մասնաշենքը քանդելու խնդրին:**

**«Զվարթնոց» օդանավակայանի հին մասնաշենքը քանդելու առաջարկությամբ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերությունը դեռեւս ամիսներ առաջ դիմել էր Երեւանի քաղաքապետարան, սակայն քաղաքապետարանին կից գործող քաղաքաշինական խորհուրդը մերժել էր դիմումը: Քաղաքապետարանի ճարտարապետական հանձնաժողովի նախագահ Հրաչյա Պողոսյանը երեկ նշեց, որ հին համալիրը նախ եւ առաջ ճարտարապետական արժեք է. «Իսկ որեւէ հուշարձանի ֆիզիկական վիճակը պատրվակ չէ քանդելու համար»:**

**Քննարկման ժամանակ նշվեց նաեւ, որ օդանավակայանի հին շենքը Փարիզում մի մրցույթի ժամանակ արժանացել է ճարտարապետական լավագույն կառույց մրցանակի կոմպոզիցիոն իր լուծումների համար:**

**Իսկ Քաղավիացիայի գլխավոր վարչության ներկայացուցիչ Աշոտ Ազիզյանը նշեց, որ շենքն այժմ չի օգտագործվում, իսկ հիմնովին վերանորոգելու համար անհրաժեշտ է 10-12 միլիոն դոլար: Ըստ նրա՝ օդանավակայանը հետագայում ընդարձակվելու է դեպի աջ, եւ այդ դեպքում հին շենքն արդեն կխանգարի: Ճարտարապետ Հրաչյա Պողոսյանն առարկեց՝ թե ինչու՞ չի ընդլայնվում դեպի ձախ: Ձախ կողմում էլ կան կառույցներ, որոնք կքանդվեն, ըստ ճարտարապետի՝ դրանք հենց քանդելու բաներ են:**

**Իսկ ավիացիայի բնագավառում ենթահանձնաժողովի անդամ Վլադիմիր Քոչարյանը «Ազգի» հետ զրույցի ժամանակ ասաց, որ այսօր հանրապետությունում կա 12 օդանավակայան, որոնք չեն շահագործվում, սակայն նախատեսված է, որ առաջիկայում դրանք շահագործվելու են:«Հետեւաբար հին շենքը կարող է ծառայել ներքին ուղեւորների համար, եւ այն քանդելու կարիք չկա»:**

**Խնդիրն առաջիկայում կքննարկվի Հանրային խորհրդի լիագումար նիստում: Ի. Պ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010



# Թեքեյան դպրոց Գյումրու Հանթսման թաղամասում

Ամեն անգամ Հայաստանի երկրորդ քաղաք՝ Գյումրի գնալիս երկակի տպավորություններ են առաջանում: Ավերիչ երկրաշարժից 25 տարի անց էլ Գյումրիում մնում են տնակներ, կիսավեր շինություններ եւ ամենասարսափելին՝ խրոնիկական դարձած թախիծ գյումրեցի մարդկանց դեմքերին: Բայց կիսավեր շինությունների կողքին այսօր Գյումրիում կարելի է տեսնել դեռեւս կիսասարք շինություններ, որոնցում շարունակվում են շինարարական աշխատանքները, կարելի է տեսնել նաեւ կառուցվող բազմաբնակարան շինություններ եւ տներ, եւ ամենակարեւորն ու ոգեւորիչը՝ դպրոց շտապող ու դպրոցից վերադարձող երեխաներ:



Նրանցից շատերը հաճախում են Գյումրու թիվ երկու դպրոց, որը գյումրեցիների շրջանում ընդունվում է որպես «բարձրագույն ուսումնական հաստատության պես մի բան», դրան հավասար. դպրոցը 1994-ից կրում է անվանի բանաստեղծ Վահան Թեքեյանի անունը: Տնօրեն Հովհաննես Պետրոսյանը, ով 2009-ին ճանաչվել է ՀՀ լավագույն տնօրեն, գյումրեցուն վայել եւ միեւնույն ժամանակ արժանի հպարտությամբ ներկայացնում է իր դպրոցը. ունի ճիշտ 699 աշակերտ, 76 ուսուցիչ, 15 օժանդակ աշխատող: Դպրոցը հիմնադրվել է դեռեւս անցյալ դարի սկզբներին՝ 1927-ին եւ եղել է ռուսական: Այնուհետեւ անկախությունից հետո դարձել է լրիվ հայկական, ավելի ուշ՝ «ռուսական թեքումով», եւ 1994-ից կրում է Վահան Թեքեյանի անունը: Ընդ որում, չնայած որ դպրոցը գտնվում է Գյումրու ամենաբարեկարգ թաղամասերից մեկում, նոր վերակառուցված օտարերկրացի բարերար Հանթսմանի անունը կրող թաղամասում, Շիրակի մարզպետարանի դիմաց, այնուամենայնիվ, պահպանել է Թեքեյանի անունը, չնայած փորձեր են կատարվել դպրոցը վերանվանելու Հանթսմանի անունով:

Ամերիկայի ու Կանադայի Թեքեյան մշակութային միության (ԹՄՄ) դեռեւս 2000-ից նախաձեռնած եւ իրականացվող «Ուսուցիչ մը հովանավորէ» ծրագրի շրջանակներում, որով, հիշեցնենք, Հայաստանի ու Արցախի Թեքեյանի անունը կրող դպրոցների մանկավարժական անձնակազմին ու օժանդակ աշխատողներին Ամերիկայի ու Կանադայի ԹՄՄ ներկայացուցիչների հանգանակությունների շնորհիվ տրվում է համապատասխանաբար 130 եւ 30 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, երեկ ԹՄՄ ներկայացուցիչները, Երեւանում ԹՄՄ գրասենյակի պատասխանատու Գայանե Մուրադյանը, ֆրանսաբնակ մտավորական Վարուժան Սիրատյանը եւ Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ընդունող հանձնաժողովի նախագահ, գիտությունների թեկնածու, մշակութաբան Գարեգին Գեւորգյանը Գյումրու Թեքեյանի անունը կրող թիվ երկու դպրոցում էին:

Դպրոցի բարեկարգ շինությունը, խաղահրապարակը, 16 ժամանակակից համակարգիչներով, էլեկտրոնային էկրանով համակարգչային դասարանը, հարուստ գրադարանը, բարեկարգ դասարանները աչք էին շոյում: Կարելի է ասել, որ Գյումրու թիվ երկու դպրոցում բոլոր նախադրյալները կան աշակերտների համար՝ սովորելու, լավ սովորելու: Դպրոցում ուսուցանվում է երկու եվրոպական լեզու՝ անգլերեն եւ ֆրանսերեն: Վերջինիս առկայությունը դպրոցի ուսումնական գործընթացում հատկապես ոգեւորեց ֆրանսաբնակ պրն Սիրատյանին, որը դպրոցի ֆրանսերենի ուսուցչուհու հետ զրույցում պայմանավորվեց ֆրանսերեն գրականության տրամադրման հարցում:

Գյումրու թեքեյանցիները, անկախ ԹՄՄ ներկայացուցիչների նվիրատվությունից եւ նաեւ դրանով, ուրախ են:

Դպրոցի տնօրեն պրն Պետրոսյանը մեզ ծանոթացնում է հին Գյումրիին. «Սա մեր քաղաքն է», ասում է նա՝ հպարտությամբ: Վստահաբար նրա այս պահի 699 աշակերտների քաղաքն էլ է Գյումրին, որտեղ մի օր այցելելիս, վստահ ենք, էլ երկակի տպավորություններով չենք հեռանա:

**ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ**
Գյումրի-Երեւան

ՄԵՂՐՈՒ ԴԵՊՔԻ ԱՌԻԹՈՎ

# Սադրա՞նք, թե՞ մկանների ցուցադրում

*1-ին էջից*

**Արդյո՞ք կարող են իրականությանը դույզն- ինչ մոտ լինել այն կանխատեսումները, որ ռազմավարական գործընկերը արդեն կենցաղային եւ այլ մակարդակներով կուզենա ցուցադրել իր ներկայությունը, այդպիսով շատ հարցերի հետ կապված հիշեցնելով իր մասին: Պարզ թյուրիմացությո՞ւն է, թե՞ լավ մտածված, դետալացված գործողություն: Եթե պարզ թյուրիմացություն է եղել, ապա սա շատ հեշտ կարելի է չեզոքացնել՝ պաշտոնական ներողությամբ ՀՀ-ից, ու հայկական կողմն էլ եթե պաշտոնապես գնահատական հնչեցնի: Այս դեպքում որպես եզակի դեպք, պատահականություն տեղի ունեցողը գուցե հարթվի-մոռացվի:**

**Սակայն եթե գոնե ռուս սահմանապահների մակարդակով ուժի ցուցադրում է եղել ՀՀ քաղաքացիների հանդեպ՝ սրանից մերոնք պետք է հետեւություններ անեն, թե արդյո՞ք Մաքսային միություն մտնելը կարող է այս պատահականություններն օրինաչափություն դարձնել, անկախ նրանից, որ ի վերջո տեղի ունեցողում գուցե դեր է ունեցել ընդդիմադիր պատգամավորի սովորաբար ակտիվ պահվածքը: Բոլոր դեպքերում չենք կարծում, որ մեր հանրությունն անտարբեր մնա այս տեսակ դրսեւորումների հանդեպ: Երկուշաբթի Ազգային ժողովում պարզաբանում պետք է պահանջվի տեղի ունեցածի վերաբերյալ, անգամ մի դատապարտող հայտարարություն ընդունվի: Իսկ մինչ այդ միգուցե ռուս սահմանապահների կողմից ինչ-որ պաշտոնական հայտարարություն կհնչի, ու ըստ այդմ տեղի ունեցողը շարունակություն կունենա:**

**Եթե սադրանքի տարբերակն է՝ պետք է մտածել, թե ո՞ր կողմին է դա ձեռնտու. միգուցե ինչ-որ մեկին պետք է այս կարգի միջադեպերո՞վ Հայաստանում «հակամաքսային տրամադրություններ» անել, կամ ինչպես Գեղամյանն է ասում՝ խնդիր է դրված ստվեր գցել հայ-ռուսական բարեկամության վրա եւ հայաստանցիների վզին փաթաթել, թե Մաքսային միություն մտնելով Հայաստանն ինքնիշխանություն է կորցնում: Չգիտենք, բայց դեպքի մանրամասները բացահայտել արժե՝ ճիշտ հետեւությունների հանգելու համար: Բոլոր դեպքերում անընկալելի է մնում, թե ինչու պետք է մեր երկրի ներպետական ճանապարհին թեկուզ հայկական սահմանը հայերիս հետ համատեղ հսկող ռուս սահմանապահը կանգնեցնի Հայաստանի քաղաքացիներին եւ անվայելուչ պահի իրեն: Այստեղ նաեւ իրավական գնահատականի կարիք կա, եւ ռուս սահմանապահ ղեկավարությունը հենց պետք է շահագրգիռ լինի՝ բացահայտելու տեղի ունեցածի շարժառիթները:**

**Մ. Խ.**


# 10000 ՄԲ ինտերնետ եւ 10000 ներցանցային րոպե՝ Nokia Lumia 925 կամ HTC One գնելու դեպքում




**ՎիվաՍել-ՄՏՍ-ն ներկայացնում է. 4-րդ սերնդի ցանցի հետ համատեղելի Nokia Lumia 925 եւ HTC One սմարթֆոնները, որոնց շնորհիվ կարելի է լիարժեք վայելել LTE ցանցի ընձեռած հնարավորությունները: Ավելին, ձեռք բերելով այս հեռախոսներից մեկը ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններից, կարելի է ստանալ բոնուս՝ 10000 ՄԲ ինտերնետ եւ 10000 ներցանցային րոպե նախընտրած կանխավճարային քարտի համար, եւ օգտագործել այն 1 տարվա ընթացքում:**

**Ի դեպ, Nokia Lumia 925 սմարթֆոնը կարելի է ձեռք բերել բացառապես ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններում:**

**Ցանկության դեպքում հեռախոսները կարելի է ձեռք բերել նաեւ ապառիկ:**

**Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.mts.am կայքից կամ pda.mts.am բջջային կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:**


# Ճանապարհային ոստիկանությունը հիշեցնում եւ տեղեկացնում է

**Ճանապարհային ոստիկանությունը հիշեցնում է, որ «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն տեխնիկական զննության կտրոնը տրանսպորտային միջոցի դիմապակուն փակցնելը պարտադիր է, իսկ դրա բացակայությունն առաջացնում է վարչական պատասխանատվություն:**

**Հաշվի առնելով, որ նախորդ տարիներին տրանսպորտային միջոցների գերակշիռ մասը տարեկան տեխնիկական զննություն են անցել հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, այսինքն, մոտենում է հերթական տեխնիկական զննության ժամանակը, վարորդներին կրկին հորդորում ենք տրանսպորտային միջոցը վարել միայն տեխնիկական զննության կտրոնը սահմանված տեղում փակցված վիճակում:**

**Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հոկտեմբերի 5-ից ուժեղացվելու է հսկողությունը տրանսպորտային միջոցն առանց տեխնիկական զննության կտրոնը սահմանված տեղում փակցված վիճակում վարելու իրավախախտումների նկատմամբ, եւ իրականացվելու են համապատասխան միջոցառումներ:**

Ճանապարհային ոստիկանություն


## Կորել է

Ա/Ձ Գայանե Շեգունցի պետական ռեգիստրի վկայականը 01 Ա 096597, գրանցման համարը 282.08332 (22.02.2006 թ.): ՀՎՀՀ 25269146: Համարել անվավեր:

# Հասկանանք՝ ումից ինչ ակնկալել

Չորեքշաբթի օրը «Նովոստի Արմենիա» լրատվական գործակալության մամուլի կենտրոնի լեփ-լեցուն դահլիճում անցած Երեւան-Մոսկվա հեռուստակամուրջը, լրագրողների աշխույժ քննարկումները հեռուստակամրջից առաջ եւ հետո պարզ ցույց տվեցին, թե որքան այժմեական եւ աշխույժ են Հայաստանի եվրասիական ինտեգրման հեռանկարին վերաբերող քննարկումները: Մոսկվացի քաղաքագետ Անդրեյ Սիդոռովը հաշվարկել է, որ վերջին չորս տարիների ընթացքում եվրոպական ինտեգրման գործընթացների լուսաբանման եւ հասարակական մատուցման գործընթացներում ներգրավված է եղել ավելի քան 350 հայկական հասարակական կազմակերպություն: Այնինչ հայ-ռուսական, էլ չասած՝ հայ-ղազախական եւ հայ-բելառուսական հարաբերությունների նմանատիպ ոլորտներում ընդգրկված կազմակերպությունների թիվը կարելի է հաշվել երկու ձեռքի մատներով: Չորեքշաբթի օրը Զարգացման եվրասիական բանկի գլխավոր վերլուծաբան Եվգենի Վինոկուրովը տեղեկացրեց, որ հասարակական կարծիքի հարցումներով Հայաստանի բնակչության 67%-ը դրական է տրամադրված եվրասիական ինտեգրացիայի նկատմամբ եւ միայն 5%-ը՝ բացասական: Այնինչ հասարակական քաղաքական դաշտում տրամադրությունները կարծես թե հակառակն են: Եվրոպական ինտեգրման գործընթացի բառապաշարով զինված մեր քաղաքացիական հասարակության մասը լուրջ դժվարություն ունի համակերպվելու Մաքսային միությանը եւ ապագա Եվրասիական միությանը Հայաստանի անդամակցության քաղաքական որոշմանը: Ահա թե ինչու շատ կարեւոր եմ համարում, որ մեր քաղաքացիական հասարակության ինստիտուտները եւ հետաքրքրված հանրությունն ընդհանրապես տեղյակ լինեն ոչ միայն եվրասիական ինտեգրման գործընթացի հանգրվանային փուլերին եւ կարեւորագույն քաղաքական իրադարձություններին, այլեւ փորձի հասկանալ այդ գործընթացների բարդ եւ ոչ միանշանակ ներքին տրամաբանությունը, տեղեկացված լինի եւ դրանով նաեւ մասնակից լինի Եվրասիական միության շինարարության գործընթացին: Հենց դրա համար էլ առաջարկում եմ վերլուծել այն կարեւոր տեղեկությունները, որոնք Հայաստան են հասնում այս խնդրին առնչվող ամենատարբեր տեղերից: Չէ՞ որ մենք պետք է հասկանանք, թե մեր զարգացող տնտեսություն, բարեկեցիկ հասարակություն եւ անվտանգ ու կայուն պետություն ունենալու մեր ձգտման մեջ ումից ինչ կարող ենք ակնկալել: Որո՞նք են արտաքին աշխարհից, մեզ վերաբերող գլխավոր ուժային կենտրոններից եկող ազդակներն ու դրանցից սպասելիքները եւ որո՞նք են այն խնդիրները, որոնք մենք ուղղակի պարտավոր ենք ինքներս լուծելու մեր տանը՝ Հայաստանում:

### Մաքսային միությունը Հայաստանում դարձնել ավելի ճանաչելի

Մեր շարքային քաղաքացիների ճնշող մեծամասնությունը կարծում է, որ եվրասիական ինտեգրման գործընթաց ասելով մենք հասկանում ենք հայ-ռուսական բազմաբնույթ հարաբերությունների էլ ավելի խորացում: Սա մոտավոր ճշմարտություն է, բայց այսպիսին է խնդրի նկատմամբ միայն բարձր շփումների առիթներով տեղեկատվություն ստացող հայաստանյան միջին վիճակագրական քաղաքացու պատկերացումը: Դեռ պետք է երկար ու մանրամասն բացատրել, որ Մաքսային միությունը ընդհանուր տնտեսական տարածք է Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի միջեւ, որին ցանկանում են մասնակցել նաեւ Ղրղզստանը եւ Հայաստանը, գուցե հետո նաեւ այլ հետխորհրդային տարածքի պետություններ: Սա ասում եմ այն պատճառով, որ նույնիսկ մոսկովյան հեռուստաալիքները հայկականից գերադասող մեր շատ հեռուստադիտողներ դժվար թե բավարար չափով տեղեկություններ ստանան Եվրասիական միության կառուցման քաղաքական եւ հասարակական քննարկումների եւ դրան առնչվող անցուդարձի վերաբերյալ: Սա ճշմարտություն է, որի մասին խոսում են եվրասիական տարածքի շատ քաղաքագետ դիտորդներ, որոնք հետեւում են վերոհիշյալ գործընթացներին: Օրինակ՝ վերջերս հայտնի էր, որ Մաքսային միությունում միասնական տարադրամի անցնելու ծրագրեր չկան: Հայտնի է նաեւ, որ Մաքսային միության անդամներից ոմանք էական առարկություններ ունեն վերազգային քաղաքական կառույցներ ձեւավորելու ծրագրերի դեմ, պատճառաբանելով, որ համաձայն չեն զիջելու իրենց ազգային ինքնիշխանության մի մասը: Բայց ահա Պետական դումայի ԱՊՀ երկրների, եվրասիական ինտեգրման եւ հայրենակիցների հետ կապերի կոմիտեի նախագահ Լեոնիդ Սլուցկին հայտարարել է, որ Եվրասիական միության կանոնադրության մեջ մի ամբողջ բաժին կլինի միջխորհրդարանական ձեւաչափի վերաբերյալ: Սկզբում դա կլինի միջխորհրդարանական ասամբլեա, որը հետագայում կարող է վերաճել Եվրասիական խորհրդարանի: Ընդ որում, ռուս խորհրդարանականն ասել է նաեւ, որ նոր ստեղծվելիք այդ կառույցը կարող է օրինակ վերցնել Եվրոպական խորհրդարանից: Նա կարծիք է հայտնել, որ այս ձեւաչափը կարող է ստեղծվել 2015 թ. հունվարի 1-ին Եվրասիական միության հռչակումից հետո մի քանի տարվա ընթացքում: Սա նշանակում է, որ միջազգային մակարդակում սկսելու է քննարկվել վերազգային գոնե որոշ կառույցների ձեւավորման հարցը, եւ ուղղակի անթույլատրելի է դուրս մնալ աշխատանքային այս քննարկումների շրջանակից: Ընդ որում, այս բազմակողմ քննարկումները, ինչպես եղել է Եվրոպական միության շինարարության գործընթացում մոտ քսան տարվա մեջ, մեր պարագայում եւս ենթադրում են բազմակողմ քննարկումներ եւ համաձայնեցումներ հասարակական համերաշխության եւ շահերի ներդաշնակեցման պայմաններում: Ինչպես ասում են, դրա մասին խոսելն է հեշտ, իսկ դա անելը շատ ավելի դժվար է:

Մաքսային միության հետ կապված շատ խնդիրներ մեր հասարակությանը այսօր բոլորովին անծանոթ են: Չորեքշաբթի օրվա վերոհիշյալ հեռուստակամրջի ժամանակ մոսկվացի բարձրաստիճան մի պաշտոնյա հայտարարեց, որ իր կարծիքով Հայաստանին մնացել է ընդամենը ընդունել այն մոտ հարյուր օրենքները եւ ռեգլամենտները, որոնք մշակվել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից: Բայց բոլորն էլ տեսան, որ սա նույնպես ճշմարտություն է մասամբ, որովհետեւ այլ մոսկվացի պաշտոնյաներ ավելի վաղ ընդունել են, որ եթե Ռուսաստանի Դաշնության սուբյեկտ Կալինինգրադի մարզը ունի արտոնություններ եւ առանձնահատկություններ բուն Ռուսաստանի հետ մաքսային հարաբերություններում, ապա Ռուսաստանի եւ Մաքսային միության երկրների հետ սահման չունեցող Հայաստանի Հանրապետությունը պետք է որ ակնկալի առնվազն նման արտոնություններ: Մաքսային միությանը մեր անդամակցության հակառակորդների փաստարկներից մեկն է, օրինակ, որ եթե չլինեն այդ առանձնաշնորհները, ապա, օրինակ, Հայաստան ներկրվող հին ավտոմեքենաները կարող են շատ ու շատ թանկանալ: Ինչպես տեղի է ունեցել Ղազախստանում: Ուրեմն բացվում է եւս մեկ դաշտ հասարակական ուշադրության ներքո այս հարցերը Մոսկվայում բարձրացնելու եւ լուծելու համար:

Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության մասին տնտեսագիտական հաշվարկներում խոսք է գնում, որ մաքսային տուրքի վերացումից հետո ռուսական գազը կարող է էժանանալ մինչեւ 30%-ով: Եվ նույնիսկ ասվում է, որ դա կարող է դրականորեն անդրադառնալ, օրինակ, հայկական ադամանդագործության զարգացման վրա: Բայց սա նույնպես մոտավոր ճշմարտություն է, որովհետեւ գազի եւ բենզինի գները մեր պետության, մեր կառավարության եւ մեր հասարակական հարաբերությունների խնդիրներն են եւ վերաբերում են միայն մեր երկրի ներսում լուծվելիք հարցերի թվին: Ահա թե ինչու կարեւոր է հասկանալ, թե մեր ինտեգրացիոն գործընթացներում ումից ինչ ենք ակնկալում:

### Ստորգետնյա խութեր սպառնալիքների տեսքով

Մեր ազգային անվտանգության համար սպառնալիք խնդիրներից մեկի մասին բարձրաձայնեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ՀԱՊԿ վերջին գագաթաժողովում: Խոսքն այն մասին է, որ ՀԱՊԿ որոշ անդամ-երկրներ այդ անվտանգային ռազմաքաղաքական դաշինքի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին արտահայտում են մի տեսակետ, իսկ այլ հարթակներում՝ այլ: Հայտնի է, որ թյուրքալեզու պետությունների համագործակցության կազմակերպություններում Ադրբեջանը, ունենալով Թուրքիայի աջակցությունը, շատ աշխույժ քաղաքականություն է առաջ մղում Հայաստանը մեկուսացնելու եւ վարկաբեկելու նպատակով: Սա հայտնի է եւ նորություն չէ: Բայց չհիմնավորված լավատեսությամբ կարծելը, թե Մաքսային միությանը անդամակցելու պայմաններում եւ նույնիսկ ապագա Եվրասիական միություն Ադրբեջանի մտնելու դեպքում Ադրբեջանն ու Թուրքիան կհրաժարվեն իրենց աշխարհառազմավարական ծրագրերից՝ բավական մեծ միամտություն է: Ահա թե ինչու պետք է հետեւողականորեն առաջ մղել Հյուսիս-Հարավ ռազմավարական առանցքի ըստ ամենայնի զարգացման հարցը, որտեղ Հայաստանի շահերը արմատապես համընկնում են Ռուսաստանի եւ Իրանի, գուցե նաեւ Չինաստանի շահերի հետ: Այդ առանցքի կարեւորագույն մի բաղադրիչը աբխազական երկաթուղու վերագործարկումն է, առանց որի Հայաստանը իրեն չի զգալու եվրասիական տարածքի լիարժեքորեն ինտեգրված մաս: Մենք այս մասին պետք է խոսենք անդադար եւ հնարավոր բոլոր խողովակներով առաջ մղենք այս հարցը, որը առանց լուրջ ու հետեւողական ջանքերի միջնաժամկետ հեռանկարում ուղղակի չի լուծվի: Ընդհանրապես միշտ աչքի առաջ պետք է ունենալ այն պարզ իրողությունը, որ մեր հարեւանները ջանքեր չեն խնայելու Հայաստանի աչքում Ռուսաստանը նսեմացնելու եւ Ռուսաստանի աչքում մեր երկիրը նսեմացնելու նպատակով: 21-րդ դարը տեղեկատվական տեխնոլոգիաների դար է, եւ ինչ խորամանկություններ ասես, որ չեն գործադրվելու այս ռազմավարական նպատակին հասնելու համար: Ամենաանսպասելի հարթակներում եւ ատյաններում կարող են հայտնվել ամենաանսպասելի դերակատարներ, որոնք իրենց վրա կվերցնեն ամենաանսպասելի միջոցներով այդ սեւ գործը անելը: Սրան դիմակայելը համարժեք միջոցներով մեր երկրի համար թանկ եւ, կարելի է ասել, անլուծելի խնդիր է: Նաեւ չարժե մեր ժողովրդին ավելորդ տեղը լարել վհուկների որսի կամ «բռնեցե՛ք լրտեսին» վիճակներով: Բայց զգոնությունը լավ բան է եւ մեր ազգային գիտակցության մեջ արմատավորված երեւույթ: հենց դրա համար էլ մեր հասարակական դաշտում վերջին ամիսների ընթացքում ծավալված հասարակական աշխույժ բանավեճը եվրասիական ինտեգրման կողմնակիցների եւ հակառակորդների միջեւ պետք է շարունակել՝ չիջեցնելով քննարկումների մակարդակը վհուկների որսի աստիճանի եւ փնտրել ներքին թշնամիներ մեր հասարակական համերաշխության մթնոլորտը նոր-նոր ձեւավորման մեր օրերում:

### Եվրասիական ինտեգրման գործընթացը՝ հասարակական վերահսկողության ներքո

Որպեսզի եվրասիական ինտեգրման գործընթացի իրական կողմնակիցների տեսակարար կշիռը համահունչ լինի մեր լրատվամիջոցներում եւ հասարակական քաղաքական դաշտում առկա տրամադրություններին, անհրաժեշտ է, որ լսելի դառնան բոլոր նրանց ձայները, ովքեր այս բնագավառում ասելիք ունեն: Պատշաճ մակարդակի քննարկումները մեր հասարակության մեջ Մոսկվայում սեպտեմբերի 3-ին կայացած Պուտին-Սարգսյան հանդիպումով ոչ թե ավարտվում են, այլ նոր միայն սկսվում են: Ակնհայտ է, որ երկկողմ ու բազմակողմ բանավեճերը մեզանում դեռ երկար են շարունակվելու եւ դրա համար կրկին կարեւոր է, որ դրանք ամրապնդեն քաղաքական կայունությունը եւ հասարակական համերաշխությունը, այլ ոչ թե հիվանդագին ցնցումների մեջ պահեն բոլորիս: Վերջին ամսվա ընթացքում նույնիսկ արեւմտյան փորձագետների վկայություններով մենք հասկացանք, որ Մաքսային միությանն անդամագրվելով մեր տնտեսությունը կարող է ունենալ շոշափելի լրացուցիչ աճ: Մենք հասկացանք, որ մեր պետական կառավարական մեքենայի, ինչպես նաեւ ներքին քաղաքականության ասպարեզում ընդունվելիք որոշումների դեպքում Հայաստանի տնտեսական զարգացումը տեսականորեն կարող է արագանալ: Բայց մենք նաեւ շատ լավ հասկացանք, որ առանց եվրոպական տիպի պետության եւ հասարակության կառուցման մեր աղմկոտ կոչերը մնալու են լոկ բարի ցանկություններ, իսկ վերոհիշյալ բոլոր նպատակների իրականացման օգտակար գործողության գործակիցը լինելու է ցածր: Ահա թե ինչու մեր քաղաքացիական դաշտում ընթացող բուռն բանավեճերը օգտակար են այնքան ժամանակ, քանի դրանք մեզ բոլորիս ուժեղացնում են:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու**

# «Խելագար» նախագահի որոշ գրգռիչ դատողություններ

*Միխեիլ Սաակաշվիլին ՄԱԿ-ի ամբիոնից առաջ ցեխ է շպրտել Ռուսաստանի ու Եվրասիական միության ուղղությամբ*

«Հայաստանին մտցրեցին անկյուն ու պարտադրեցին մտնել Մաքսային միություն, ինչը ոչ Հայաստանի, ոչ էլ մեր տարածաշրջանի շահերից չի բխում», ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 68-րդ նստաշրջանի իր ելույթում հայտարարել է Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին: Երբեւէ Հայաստանի հանդեպ հարգանքի դրսեւորում չունեցած Սաակաշվիլին հակառուսական իր ձեւակերպումներում կարգին հեռուն է գնացել, թեեւ ռուսներին չհամաձայնել չիկարելի:



«Մոլդովային ճնշափակում են հայտարարել, հարձակումներ Ուկրաինայի վրա, Ադրբեջանը մնացել է երեսառերես ճնշման դեմ, Վրաստանն էլ օկուպացված է», ասել է Վրաստանի նախագահը Նյու Յորքում սեպտեմբերի 25-ի իր ելույթում, որի մեկնարկից քիչ անց ռուսաստանյան պատվիրակությունը լքել է դահլիճը (իսկ որտե՞ղ էր հայկական պատվիրակությունը- Վ.Պ.): Իսկ թե ինչու է այդպես՝ Սաակաշվիլին ներկայացրել է, թե սահմաններ չունեցող Խորհրդային Միությունը կամ Եվրասիական միությունը եւ, որ նույնն է, Ռուսական կայսրությունը «միայն ծայրամասեր, եզրեր ունեն, որոնց անունից էլ» Սաակաշիլին խոսում է:

«Ռուսաստանի Դաշնությունն, ի տարբերություն երկրների մեծ մասի, հետաքրքրված չէ իր շրջապատում կայուն պետությունների գոյությամբ: Հավերժական քաոսն ու անկարգությունը հարեւան երկրներում հենց այն են, ինչի ձգտում է Կրեմլը», մի քիչ պաթետիկ, բայց իրականությունից ոչ հեռու դատողություն է մատուցել Վրաստանի ոչ այնքան հավասարակշիռ նախագահը:

«Ինչ եք կարծում, օրինակ, Պուտինը ցանկանո՞ւմ է, որ Հայաստանը ամբողջական հաղթանակ տանի Ադրբեջանի նկատմամբ», թերեւս ակամա Ադրբեջանի նկատմամբ հայկական կողմի տարած հաղթանակը թեեւ ոչ ամբողջական, բայց ընդունել է Սաակաշվիլին, շեշտադրմամբ, թե այդ դեպքում կնշանակեր, որ Հայաստանը դառնում է չափից դուրս ուժեղ եւ չափից դուրս անկախ:

Սաակաշվիլու համար հակառակն էլ ընդունելի չէ, այսինքն՝ Ռուսաստանը չի ցանկանում Ադրբեջանի հաղթանակը Հայաստանի նկատմամբ, քանի որ «արդիականացված Ադրբեջանի վերածնունդն էլ ռուս լիդերների համար հավասարազոր է սարսափի»: Վրաստանի նախագահի դատողությամբ՝ Ռուսաստանը հենց հակամարտությունն է ուզում, քանի որ այդ դեպքում ապահովվում է երկու երկրների կախվածությունը Ռուսաստանից եւ խոչընդոտվում դրանց եվրոպական ինտեգրումը:

Ուկրաինային ահավոր ճնշում են, Վրաստանի առումով էլ «Աբխազիան եւ Հարավային Օսիան վերադարձնելուն Ռուսաստանը պատրաստ չէ»:

Սաակաշվիլու՝ ինքնագովության ու Վրաստանի բացառիկության եւ նմանատիպ դատողությունների մասը բաց թողնելով՝ նշենք նաեւ, որ ասվածի համատեքստում թեեւ ճշմարտության բաժինը քիչ չէ, բայց Սաակաշվիլին այդպես էլ շարունակում է լոթի թիֆլիսցու մենթալիտետով մոտենալ Հայաստանին՝ իր ծագման արմատներում հայկականից վախեցած, թե դժգոհ: «...Ռուսաստանի այսօրվա ղեկավարները հրաշալի գիտեն, որ հենց ամուր հաստատություններ կառուցվեն Ուկրաինայում, Վրաստանում, Մոլդովայում կամ էլի ինչ-որ տեղ (ողջ ելույթի համատեքստում այդ ինչ-որ տեղը Հայաստանն է ստացվում- Վ.Պ.), այդ հաստատությունները կամրացնեն իրապես անկախ ու եվրոպական ընտանիքի մաս լինելու այդ երկրների ժողովուրդների ցանկությունը»:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի նախագահության գլխավոր նախագիծ հանդիսացող Եվրասիական միությունն, ըստ Սաակաշվիլու, ոչ թե արտաքին քաղաքականության հարց է, այլ անցյալ վերադառնալու ճանապարհ, որն ուղեկցվում է «հաստիկ ներդրված» մտայնություններով, թե Եվրոմիությունը ընտանեկան արժեքների ավերման է բերում, քայքայում ազգային ավանդույթներն ու սեռական այլ կողմնորոշում պարտադրում:

20-րդ դարասկզբի հայ-ադրբեջանական (թե այդ ժամանակվա ադրբեջանցին որն էր- Վ.Պ.) կամ վրաց-աբխազական հակամարտությունների սաակաշվիլիական պատմագիտությունը, նաեւ Ռուսաստանի ապագային առնչվող դատողությունները ելույթի կարեւոր հատվածներից չեն: Դրա փոխարեն ՄԱԿ-ի ամբիոնի իր խոսքում, որ ուժեղ, հզոր ու նման այլ որակումներով են ներկայացրել ԱՄՆ շատ դիվանագետներ ու չինովնիկներ, Արեւելյան Եվրոպայի որոշ ներկայացուցիչներ, Սաակաշվիլին Եվրասիական միության անդամությունը պիտակել է որպես գաղութ դառնալու քայլ:

Սաակաշվիլու ելույթի ավարտն էլ կենաց է «Սաքարթվելո գաումարջոս»՝ «հանուն Վրաստանի կամ կեցցե Վրաստանը» տարբերակով:

Մեկնաբանությունների կարիք չկա, միայն ընդգծում, որ Սաակաշվիլին իր երկրի կենացը խմելու իրավունք, անգամ եթե հաջող նախագահ չի եղել տարբեր գնահատականներով, հաստատ ունի, թեկուզ ՄԱԿ-ի ամբիոնից:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

# Ստրկատերերի հանցախումբ Ուելսում

Հարավային Ուելսի ոստիկանությունը ձերբակալել է 7 անձանց, որոնք կասկածվում են ստրկական աշխատանքի օգտագործման մեջ, հաղորդում է Wales Online էլեկտրոնային հրատարակությունը:

Առաջին չորս անձանց ձերբակալության ժամանակ ոստիկանները գտել եւ ազատել են մի արեւելաեվրոպացու, ենթադրաբար՝ լեհի, որին կասկածյալները պահել էին ստրկության մեջ: Ծանր վիճակում նրան ուղարկել են հիվանդանոց: Չորեքշաբթի իրավապահներն ազատագրել են մեկ ուրիշ զոհի՝ 60-ամյա բրիտանացու: Նրան եւս հանձնել են բժիշկներին:

Բացի դրանից, ստրկատերերի ագարակում ոստիկանները փնտրում են չբացահայտված հանգամանքներում մահացած մեկ ուրիշ զոհի աճյունը:

Հանցախմբի բացահայտմանը նպաստել էր մի անանուն նամակ: Դրա հեղինակից արդեն խնդրել են կապ հաստատել իրավապահ մարմինների հետ: Քննիչները կարծում են, որ նամակագիրը կարող է էապես դյուրացնել գործի քննությունը:

Ուելսում ստրկատերերի դեմ գործողություն էր սկսվել կես տարի առաջ, երբ այնտեղ գտել էին 13 տարի կորած համարվող, բայց իրականում ստրկացված մի տղամարդու:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# Ֆրանսիայի ներքգործնախարարը հակագնչուական արշավ է սկսել



**Ֆրանսիայի ներքգործնախարար Մանյուել Վալսը կոչ է արել երկրից արտաքսել օտարերկրյա գնչուներին: Նրա խոսքերով, գնչուները չեն կարող ինտեգրվել Ֆրանսիայում, ուստի նրանց մեծ մասին հարկավոր է «հետ ուղարկել սահմանից այն կողմ»: Վալսի ձեռնարկած հակագնչուական արշավին եւ դրա արձագանքներին անդրադառնում է մասնավորապես «Ֆիգարո» օրաթերթը:**

**Նախարարի հայտարարությունը խստիվ քննադատել են Եվրոհանձնաժողովը, իրավապաշտպանները եւ Ֆրանսիայի կառավարության որոշ անդամներ:**

**«Միջազգային ներում» իրավապաշտպան կազմակերպությունը հանդես է եկել Ֆրանսիայից գնչուների արտաքսումը դադարեցնելու կոչով: Կազմակերպության տվյալներով, այս տարվա առաջին վեց ամիսներին ավելի քան 10 հազար մարդ է վտարվել գնչուների ժամանակավոր վրանավաններից:**

**Կազմակերպության ներկայացուցիչներն ասում են, որ նախարար Վալսի հայտարարությունը միայն «կամրապնդի կարծրատիպերը եւ կխորացնի թշնամանքը» Ռումինիայից, Բուլղարիայից եւ նախկին Հարավսլավիայից Ֆրանսիա եկած մոտ 20 հազար գնչուների նկատմամբ:**

**Ֆրանսիայի կառավարությունում Մանյուել Վալսի խոսքերը քննադատել է տնտեսական առողջացման նախարար Առնո Մոնտեբուրը: Նա հիշեցրել է, որ անցյալում ինտեգրման անկարողության մեջ Ֆրանսիայում հանիրավի մեղադրել էին իտալացիներին, իսպանացիներին, պորտուգալացիներին, արաբներին:**

**Մանյուել Վալսի հայտարարությունը քննադատել են նաեւ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը, գնչուների իրավունքները պաշտպանող կազմակերպությունները: Որոշ կազմակերպություններ պատրաստվում են դատի տալ Վալսին՝ նրան մեղադրելով ռասայական ատելություն բորբոքելու մեջ:**

**Վալսը մտադիր չէ ներողություն խնդրել իր խոսքերի համար եւ պնդում է, որ գնչուների կենսակերպը «ակնհայտորեն հակասում է» ֆրանսիական արժեքներին: Նա իշխանության տեղական մարմիններին հորդորել է պարբերաբար ավերել գնչուների վրանաճամբարները, ինչպես նաեւ առաջարկել է տրամադրել գնչուներին ելքի երկիր վերադառնալու ավիատոմսեր:**

**Բացի դրանից՝ Վալսը դեմ է, որ Բուլղարիան եւ Ռումինիան միանան Շենգենյան գոտուն:**

**Ինքը՝ Մանյուել Վալսը, ծնվել եւ մանկության մի մասն անցկացրել է Բարսելոնում: Նա Ֆրանսիայի քաղաքացիություն է ընդունել 20 տարեկանում:**

**Պ. Ք.**

# Կին վարորդների շուրջկալ Սաուդյան Արաբիայում



**Սաուդյան Արաբիայի ոստիկանությունը մեկ օրում տուգանել է վեց կին վարորդների: Տուգանքների ընդհանուր գումարը կազմել է մոտ 1400 դոլար, նշում է Ռոյթեր գործակալությունը: Արձանագրությունը ձեւակերպված է եղել այսպես՝ «առանց պատշաճ որակավորման փոխադրամիջոց վարելու համար»:**

**Ոստիկանները կին վարորդների շուրջկալ էին կազմակերպել քաղաքների ծայրամասերում, Արեւելյան նահանգի ծովափին եւ սակավաբնակ շրջաններում, որտեղ սաուդցի կին վարորդները սովորաբար ոստիկանների չեն հանդիպում:**

**Սաուդյան Արաբիայում կանանց բացահայտորեն չեն արգելում ավտոմեքենա վարել, սակայն օրենքները ղեկի մոտ նստելու իրավունք տալիս են միայն տեղական վարորդական վկայական ունեցողներին, իսկ կանանց այդ վկայականը չեն տալիս: Այսպիսով, թագավորությունում նույնիսկ օտարերկրյա վարորդական վկայական ունեցող կանայք չեն կարող ավտոմեքենա վարել:**

**Անցյալում սաուդցի կանայք քանիցս փորձել են ավտոմեքենա վարելու օգտին արշավ կազմակերպել, բայց իշխանություններն ամեն անգամ ակտիվիստուհիներին սպառնացել են օրենքով արգելված քաղաքական բողոքի կազմակերպման շատ լուրջ մեղադրանքներով:**

**Այս անգամ հանուն կանանց իրավահավասարության պայքարող մի խումբ ակտիվիստուհիներ իրենց բոլոր կողմնակիցներին կոչ են արել հոկտեմբերի 26-ին ավտոմեքենաներով դուրս գալ սաուդյան քաղաքների փողոցներ:**

ԱԶԳ

# Մշակույթ

*Ժողովրդական երգն ու երաժշտությունն այսօր կարծես թե մղվել են երկրորդ պլան՝ տեղը զիջելով փոփին, ռեփին, ռաբիսին։ Ցավալի է, որ մենք հեռանում ենք մեր արմատներից, ազգայինից եւ ժամանակակից երեւալու մոլուցքով տարված՝ ընկնում նման անցողիկ, ոչ այդքան արժեք ներկայացնող երաժշտության հետեւից։*

*Հատկանշական է, որ կան դեռ երիտասարդներ, ցավոք՝ քիչ, որոնք շարունակում են ազգային, ժողովրդական երաժշտության տարածումը։*

*«**Ազգը**» օրերս զրուցեց Մավր Մկրտչյանի հետ, որը հանրությանն առավել հայտնի է «Շանթ» հեռուստաընկերության «Ժողովրդական երգիչ» նախագծից։ Նա նշում է, որ ժողովրդական երգի հանդեպ սերը գալիս է հորից, ինչպես նաեւ այն տարածաշրջանից, որտեղից սերվել է՝ Ջավախքից։*

## Ժողովրդական երգի նորարարական մեկնաբանություն՝ երգիչ Մավր Մկրտչյանի կողմից




**- Վիլյամ Սարոյանն ասում էր. «Ժյուրիի գնահատականն ինձ համար ոչինչ է»։ Մավր, իսկ ի՞նչ է քեզ համար ժյուրիի գնահատականը։**

- Ժյուրիի անդամներին ես դիտարկում եմ որպես տվյալ ասպարեզի փորձառու, բանիմաց մարդկանց, որոնք իրենց փորձով կիսվում են մեզ հետ։ Իսկ եթե ժյուրին քննադատում է, ապա դրան դրական եմ վերաբերում, քանի որ այդ քննադատություններն ուղղակի անհրաժեշտություն են եւ յուրաքանչյուր կարծիքի հետ հաշվի եմ նստում։

**- Եթե չեմ սխալվում, Ֆլորա Մարտիրոսյանը խոսք էր տվել քեզ իր հետ շրջագայությունների տանել եւ որպես հետնորդ քեզ էր տեսնում։ Մի փոքր կպատմե՞ս քո եւ անկրկնելի երգչուհու հարաբերությունների, ցավոք, նաեւ արդեն անիրական պլանների մասին։**

- Իմ կյանքի ամենակարեւոր ու նշանակալի իրողություններից մեկն էր ճանաչել ու շփվել Ֆլորա Մարտիրոսյանի հետ։ Այն առանձնակի ստիմուլ է տալիս ինձ աշխատելու, ստեղծագործելու, որովհետեւ արժանանալ մի մարդու լավ կարծիքին, գովեստին, որը ամբողջ մի ազգի համար լեգենդ է դարձել, կրթել, դաստիարակել է երիտասարդ սերնդին, դա արդեն իսկ երջանկություն եւ պատասխանատվություն է։ Այս թեմայով առաջին անգամ եմ խոսում, ընդհանրապես չեմ խոսել, բայց միեւնույնն է՝ բոլոր փակագծերը չեմ կարող բացել։ Տիկին Ֆլորան պատրաստում էր համատեղ ծրագրեր, նույնիսկ համատեղ երգ ձայնագրելու, ինչպես նաեւ համերգային ծրագրով պետք է հանդես գայինք Ջավախքում։ Մնացած չակերտները չեմ ցանկանում բացել...

**- Ո՞րն է եղել Ֆլորա Մարտիրոսյանի հետ աշխատելու ընթացքում կրած գլխավոր ազդեցությունը։**

- Երբ մարդ հասնում է բարձունքի, նա չի հասնում ձայնի, տեխնիկայի շնորհիվ։ Դրան հասնելու ճանապարհը համալիր մի գործողություն է, որի վրա ազդում է ոչ միայն տաղանդը, այլեւ՝ մարդկային կերպարն ու զարգացումը։ Ես այդ ամբողջը միաժամանակ տեսա Ֆլորա Մարտիրոսյանի մեջ։ Նրանից շատ բան սովորեցի ու հասկացա. բացի երգ-երաժշտության մասին մտածելուց, պետք է մտածել ամեն ինչի մասին՝ ազգի, ներկա երաժշտական վաս վիճակի, ազգային շատ հարցերի շուրջ։ Դա ինձ մտածելու առիթ տվեց, որ բացի լավ երաժիշտ լինելուց, ազգի մասին մտածող մարդ պետք է լինես։

**- Ժողովրդական երաժշտությունը, ցավոք, այսօր զիջում է իր տեղն ու անցնում երկրորդ պլան։ Դու լինելով երիտասարդ, ի՞նչը գրավեց քեզ եւ ինչո՞ւ որոշեցին ընտրել հենց այս ոլորտը։**

- Բավականին ժամանակ է ուսումնասիրել եմ այս խնդիրը եւ իմ ստեղծագործական ընդմիջումը՝ «Ժողովրդական երգիչ» նախագծից հետո, կապված էր իմ անելիքների, ոճային հստակեցումների հետ։ Մանկուց իմ մեջ արմատներով, գեներով նստած է ժողովրդական երաժշտությունը։ Հիմա մենք մեզ պետք է հարց տանք, թե ինչո՞ւ է մղվել այն երկրորդ պլան։ Ժողովրդական երգերը կարող են առաջին հորիզոնականում հայտնվել, եթե ճիշտ մատուցես՝ ժամանակին համընթաց։ Այժմ ցանկանում եմ այդ ասպարեզում նորություն մտցնել՝ մասսայականացնել մասնավորապես մեր սերնդակիցների շրջանում։

**- Ո՞րն է լինելու քո նորարարական մոտեցումը։**

- Ես չկտրվելով արմատներից, ցանկանում եմ փոխել արտահայտչամիջոցները, որպեսզի այդ երաժշտությունը էլ ավելի տարածվի հանրության շրջանում։ Տեխնիկան այսօր այնպես է զարգացել, որ մեր ականջը սովոր է ժամանակակից հնչողության։ Մենք ժողովրդական երգը պատկերացնում ենք 60-70 ական թվականների մատուցմամբ։ Ամենամեծ խնդիրն այսօր այն է, որ այս ուղղությամբ նոր մոտեցումներ չեն ձեւավորվում։ Յուրաքանչյուր ժամանակաշրջան իր ճաշակն է թելադրում, սակայն չեմ ասում, որ ամբողջությամբ պետք է ինտեգրվենք ժամանակակից ճաշակի մեջ, բայց, իհարկե, հարկավոր է սինթեզել դրանք։

**- Կան երգեր, որոնք երգելու համար անհրաժեշտ է կյանքի փորձ։ Լսելով քեզ՝ հետաքրքրական հարց է ծագում՝ այդքան երիտասարդ լինելով, ինչպե՞ս ես կարողանում այդպես զգալ ու մատուցել երգը։**

- Ճիշտն ասած՝ այդ հարցին չեմ կարող պատասխանել։ Երգելով ցանկանում եմ ներքին ասելիքս բարձրաձայնել։ Երգում եմ ուղղակի անկեղծ։ Չգիտեմ, թե ինչպես եք զգում, հավանաբար այն կապված է իմ մարդ տեսակի հետ։ Կյանքի որոշ խնդիրներ եւս ազդել են, բայց այդ ամենի արդյունքը միանշանակ գենն է։

**- Օրերս մեկնարկեց նաեւ «Երեւանյան երաժշտական շաբաթ» նախագիծը, որի մասնակիցներից ես։ Ըստ քեզ, որն է այս նախագծի առանձնահատկությունը։**

- «Երեւանյան երաժշտական շաբաթն», ըստ իս, վերջին տարիների լավագույն մտահղացումներից մեկն է։ Եթե նախագծում աշխատում է Էմիլ Կառաշի նման պրոֆեսիոնալ անհատը, ապա դա լուրջ նախադրյալ է լուրջ արդյունք ստանալու համար։

**- Այժմ ի՞նչ գործունեություն ես ծավալում։**

- Նոյեմբերի 9-ին Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում տեղի կունենա իմ առաջին մենահամերգը, որն իր ձեւաչափով կտարբերվի համերգային մյուս ծրագրերից։ Համերգի ռեժիսորը Էմիլ Կառաշն է լինելու, իսկ մնացյալ հարցերում ինձ օգնում են ընկերներս։

***Հ. Գ.*** *Հուսանք խոշոր կազմակերպությունները անորակ սերիալների փոխարեն կսկսեն հովանավորել նման տաղանդաշատ երգիչների, որոնք չհեռանալով արմատներից՝ տարածում են ազգային, ժողովրդական երաժշտությունը։*

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

---

***ՆՇԱՆԱՎՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐ***

## Հոգին մաքրելու լավագույն ձեւը...

### *Հայ լուսանկարիչների պատմություններին ծանոթանալն է*

Իրանցի աշխարհահռչակ լուսանկարիչ Ռեզա Դեղաթին սեպտեմբերի 23-ին ավստրիական «Դի փրեսսե»-ին տված հարցազրույցում բացահայտում է, թե ինչպես է ճարտարապետի իր մասնագիտությանը հրաժեշտ տվել, երբ Իրանում շահի դեմ կազմակերպված ցույցի ընթացքում հայտնաբերել է լուսանկարչական սարքը ձեռքին ուսանողներից մեկին, որ քաոսի մեջ պատմությունն էր արձանագրում, որոշում՝ այդ սարքից անբաժան է լինելու։ «Նեյշընըլ ջիոգրեֆիկ», «Նյուզուիք», «Թայմ» ճանաչված հանդեսներին թղթակցած լուսանկարիչն ինչպե՞ս է համաձայնվել Նեսփրեսսոյի աշխատանքային առաջարկին» թերթի հարցին ի պատասխան իրանցի արվեստագետը մանրամասնել է. «Լուսանկարներիս միջոցով ազգերի, մարդկանց միջեւ կապ ստեղծելն է գլխավոր գործս», ասել է Դեղաթին պարզաբանելով,



թե ինքը գովազդային լուսանկարիչ չէ, այլ ֆոտոլրագրող, ավելի ճիշտ՝ պատմություն ներկայացնող, անձամբ գնացել է Բրազիլիա, Կոլումբիա, Գվատեմալա, հանդիպել ֆերմերների հետ, եւ քանի որ նախագիծը միտված է ֆերմերների կյանքը բարելավելուն, հետաքրքրել է։

Հարցազրույցը ներկայացնում է իրանցի արվեստագետի խոհերը դիկտատուրայի, ազատության, վախի, «արաբական գարնան» մասին։ «Ես Եգիպտոս մեկնեցի։ Կարծում եմ շատ դրական շարժում էր, բայց երկու, երեք սերունդ հետո միայն մարդիկ կստանան այն, ինչ ուզում են՝ ազատություն եւ ժողովրդավարություն։ 1981-ին Իրանը լքելուց հետո այնտեղ չի վերադարձել, ինչպես ասում է՝ ինքն է ընտրել աքսորյալ լինելու ուղին։ «Կառավարությունը չի ուզում իմ լուսանկարները։ Այն, ինչ հրապարակել եմ, մատնացույց է անում նոր կառավարության վարքագիծը»։ Բնական է՝ կարոտում է երկիրը, ընտանիքը, բայց տարիների հետ՝ ինչքան ճամփորդում, այնքան առավել համոզվում է, որ ըստ էության ողջը մի երկիր է, մի աշխարհ, իսկ այն, որ դեռ կռվում են միմյանց դեմ, քարեդարյա մարդու մտայնությունից է։ «Համոզված եմ՝ 500, 5000 տարի հետո մարդիկ կդիտեն մեզ ու կասեն՝ տեսեք, 21-րդ դարի բարբարոսներն են»։ «Ո՞րն է եղել Ձեզ հանդիպած վատթարագույն դեպքը» հարցին, իրանցի լուսանկարիչը պատասխանում է՝ «մարդկային դաժանությունը։ Երբ տեսնում ես, թե ինչպես են հարեւանները թշնամանում։ Ադրբեջանում՝ Լեռնային Ղարաբաղի մոտ ականատես եմ եղել մարտերին, թե ինչպես էին հայ զինվորները մարդկանց աչքերը հանում։Վայրագություններ են, որ երբեք չեն մոռացվում»։ «Ի՞նչ եք անում այդ հիշողություններից ազատվելու համար», «Դի փրեսսեի» հարցին Ռեզա Դեղաթին պատասխանում է՝ «բանաստեղծություն եմ կարդում։ Դա հոգին մաքրելու լավագույն ձեւն է»։

Ավստրիական «Դի փրեսսեն» չի իրազեկում, որ 1952-ին Թավրիզում ծնված Ռեզա Դեղաթին ազգությամբ ադրբեջանցի է։ 1981-ից ապրում է Ֆրանսիայում, այդ երկրի քաղաքացի է։ Իբրեւ ֆոտոլրագրող աշխատել է աշխարհի ճգնաժամային, պատերազմական գոտիներում, հեղինակել 27 գիրք։ Մասնագիտական իր փորձն է հաղորդել Սթենֆորդի, Վաշինգտոնի, Հարավային Կալիֆոռնիայի, Սորբոնի, Պեկինի, Ստամբուլի համալսարաններում, դասախոսություններ կարդացել նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ում, Ազգային աշխարհագրական ընկերությունում (National Geographic Society).

Փարիզում վերջերս բացված նրա ցուցահանդեսը 4 ամսում դիտել է մեկ միլիոն այցելու, սուրճ աճեցնողների մասին պատմող նրա լուսանկարները կարելի է տեսնել Նեսփրեսսոյի խանութներում։

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

---

## Հայաստանի անկախությանը նվիրված համերգ հանուն համերաշխության եւ համախմբման

Ամերիկայի Հայկական համագումարը, արձագանքելով տարաբնույթ կարծիքներին՝ Հայաստանի Հանրապետության անկախությանը նվիրված Նունե Եսայանի տոնական համերգի վերաբերյալ, իր խորին շնորհակալությունն է հայտնում երգչուհուն իր կատարած հսկայածավալ, հայրենասիրական ոգով լի, ժամանակակից պահանջներին համապատասխանող, բարձրաճաշակ աշխատանքի համար։

Աշխարհի բոլոր ծայրերից ժամանած հյուրերի կարծիքով չափազանց գրագետ եւ բացարձակ տրամաբանական էր թե երգերի ընտրությունը, թե մատուցման որակն ու կառուցվածքը, թե գեղարվեստական ձեւավորումը։

Հայկական երգի հզոր հնչյունների ուղեկցությամբ անցանք մեր պատմության էջերով՝ ամենադաժան օրերից մինչեւ փայլուն հաղթանակներ։

Հովանավորելով հայրենասիրական այս յուրօրինակ համախմբման կոչը, Ամերիկայի Հայկական համագումարը հույս է հայտնում, որ այն կծառայի իր վեհ գաղափարին։

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ ՀՐԱՅՐ ՀՈՎՆԱՆՅԱՆ

ԱԶԳ

# Մարզական

## Հայկ Մարտիրոսյանը կայծակնային խաղի Եվրոպայի չեմպիոն

### Հովհաննես Գաբուզյանն արժանացավ բրոնզե մեդալի

Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում մեկնարկել են շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնությունները, որոնք անցկացվում են տարիքային 6 խմբով: Սկզբում պատանի շախմատիստները վիճարկեցին կայծակնային խաղի Եվրոպայի առաջնության պարգեւները: Հայ շախմատիստներից գերազանց հանդես եկավ Հայկ Մարտիրոսյանը, որը մինչեւ 14 տարեկանների մրցաշարում նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Հայկը 9 հնարավորից վաստակեց 7,5 միավոր՝ մնալով անպարտելի: Հայ շախմատիստը լրացուցիչ գործակիցներով առաջ անցավ նույնպիսի արդյունք ցույց տված ռուսաստանցի Սերգեյ Լոմանովից:



Պատանի շախմատիստը տոնեց 6 հաղթանակ Վլադիսլավ Սիպեցինի, Նիկիտա Չեթարիի, Վլադիմիր Պետրովի, Թեոդոր Դոլանայի, Վիտալի Գուրվիչի եւ Վիկտոր Մատվիշենի հետ մրցախաղերում, հաշտություն կնքեց Գեորգ Ներոյի, Կիրիլ Շեւչենկոյի եւ Սերգեյ Լոբանովի հետ: Վերջինիս հետ Հայկ Մարտիրոսյանը մրցեց ավարտական տուրում:

Մինչեւ 14 տարեկանների մրցաշարում հանդես եկած Կոնստանտին Յայլոյանը 5 միավորով գրավեց 21-րդ տեղը, իսկ Արթուր Դավթյանը 3,5 միավորով 40-րդն էր:

Մրցանակակիր դարձավ նաեւ մինչեւ 18 տարեկան պատանիների մրցաշարին մասնակցած Հովհաննես Գաբուզյանը: Նա 9 հնարավորից վաստակած 7 միավորով գրավեց 3-րդ տեղը՝ արժանանալով բրոնզե մեդալի: Ընդ որում հայ գրոսմայստերը միայն լրացուցիչ գործակիցներով արծաթե մեդալը զիջեց ռուսաստանցի Դմիտրի Գորդիեւսկուն, որը եւս 7 միավոր էր վաստակել: Իսկ չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Վլադիմիր Ֆեդոսեեւը, որը վաստակեց 7,5 միավոր:

Հարկ է նշել, որ Գաբուզյանը մարտականորեն էր տրամադրված եւ 9 պարտիաներից ոչ մեկում հաշտություն չկնքեց: Նա տոնեց 7 հաղթանակ Վալենտին Եժելի, Պաուլ Նաստասեի, Արման Միքայելյանի, Օտտոմար Լադվայի, Լարս Ռինդլիսբախերի, Դմիտրի Խեգայի եւ Մաքսիմ Լուգովսկու հետ պարտիաներում, պարտվեց Ռադու-Մարիան Դորուսին եւ Կիրիլ Ալեքսեենկոյին:

Տարիքային այս խմբում հանդես եկած հայ շախմատիստներից 2-րդ արդյունքը ցույց տվեց Կարեն Գրիգորյանը՝ 6,5 միավորով գրավելով 4-րդ տեղը: 6 միավորով 7-րդ հորիզոնականում հանգրվանեց Մանուել Պետրոսյանը, նույնպիսի արդյունքով 9-րդն էր Կարեն Հովհաննիսյանը: Արման Միքայելյանը 5,5 միավորով գրավեց 14-րդ տեղը:

Աղջիկների մրցաշարին մասնակցած հայ շախմատիստուհիներից առավել հաջող հանդես եկավ մինչեւ 10 տարեկանների մրցավեճի մասնակից Մանե Հովհաննիսյանը, որը 6 միավորով գրավեց 4-րդ տեղը: Ընդ որում Մանեն միայն լրացուցիչ գործակիցներով զիջեց բրոնզե մեդալը նվաճած բելառուս Եվգենիա Սցեպինային: Եվրոպայի չեմպիոնուհի հռչակվեց ռուսաստանցի Ելիզավետա Սոլոժենկինան, որը հաղթեց իր բոլոր մրցակցուհիներին:

Մինչեւ 14 տարեկան աղջիկների մրցաշարի մասնակից Քրիստինե Սմբատյանը 4 միավորով գրավեց 18-րդ տեղը: Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում Սիրանուշ Ղուկասյանը 5 միավորով 10-րդ տեղը զբաղեցրեց, իսկ Սվետլանա Միրզաբեկյանը 4,5 միավորով 16-րդն էր:

## Էլինա Դանիելյանը հաշտություն կնքեց

**Շախմատի Գրան պրիի խաղարկության 8-րդ տուրում Էլինա Դանիելյանը հաշտություն կնքեց Բելա Խոթենաշվիլու հետ: Էլինան վաստակած 3 միավորով 9-11-րդ տեղերն է բաժանում Նաֆիսա Մուսինովայի եւ Ալեքսանդրա Կոստենյուկի հետ:**



**Նոր հաղթանակ տոնեց մրցաշարի միանձնյա առաջատար Համպի Կոներուն՝ առավելության հասնելով Չժաո Սյուեի նկատմամբ: Կոներուն վաստակել է 6,5 միավոր: 5,5-ական միավորով նրան հետապնդում են Կատերինա Լահնոն եւ Հարիկա Դրոնավալին, որոնք հաշտություն կնքեցին համապատասխանաբար Նաֆիսա Մուսինովայի եւ Անտոանետա Ստեֆանովայի հետ: Օլգա Գիրյան հաղթելով Ալեքսանդրա Կոստենյուկին, վաստակեց 4 միավոր: Ցզյու Վենցզյուն-Գալիսխան Նախբաեւա պարտիան ավարտվեց ոչ-ոքի:**

**9-րդ տուրում Դանիելյանը կմրցի Նախբաեւայի հետ:**

## Առաջատարից կրած պարտությունը ճակատագրական էր Սամվել Տեր-Սահակյանի համար

**Թուրքիայում վերջնագիծը հատեց մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունը: Առաջնության 2-րդ հատվածում վերելքով հանդես եկող Սամվել Տեր-Սահակյանին ցավոք չհաջողվեց մրցանակակիր դառնալ: Նրա համար վճռորոշ նշանակություն ունեցավ նախավերջին տուրում մրցաշարի առաջատար Յու Յանյիի հետ պարտիան: Սամվելն առաջատարից հետ էր մնում 1,5 միավորով եւ հաղթանակի դեպքում կարող էր նույնիսկ հավակնել ոսկե մեդալին: Սակայն ինչպես պատահել է Սամվելի հետ նախորդ տարիներին, վճռորոշ պահին հայ շախմատիստը պարտություն կրեց, ինչը զրկեց նրան նույնիսկ մրցանակակիր դառնալու հնարավորությունից:**

**Ավարտական՝ 13-րդ տուրում Սամվել Տեր-Սահակյանը ոչ-ոքի խաղաց Վենեսուելայի ներկայացուցիչ Խոսե Ֆելիքս Յնոյոսայի հետ եւ վաստակած 8,5 միավորով գրավեց միայն 14-րդ տեղը: Իսկ աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճեց չինացի Յու Յանյին, որը ոչ-ոքի ավարտելով պարտիան հնդիկ շախմատիստ Գուջրատի Վիդիթի հետ, վաստակեց 11 միավոր: Հաղթողին կես միավոր զիջեց Թուրքիան ներկայացնող Ալեքսանդր Իպատովը, որն ավարտական տուրում պարտության մատնեց սերբ Ալեքսանդր Ինջիչին: 9,5 միավորով բրոնզե մեդալի արժանացավ հնդիկ շախմատիստ Գուջրատի Վիդիթը:**

**Վահե Բաղդասարյանը 7 միավորով գրավեց 44-րդ տեղը: Ավարտական 2 տուրերը հաղթական էին Վահեի համար, որը պարտության մատնեց պորտուգալացի Պեդրո Նեւեսին եւ թուրք Դիյաթ Բոյուկասիկին:**

**Մարիա Գեւորգյանը կանանց մրցաշարում 8 միավորով գրավեց 16-րդ տեղը: Մարիան 12-րդ տուրում պարտվեց իրանցի Սարասադաթ Խադեմալշարիեհին, իսկ ավարտական տուրում հաղթեց չինացի Լիու Հոնգիանին: Աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց ռուսաստանցի Ալեքսանդրա Գորյաչկինան, որը վաստակեց 10,5 միավոր: 9,5 միավորով 2-րդ տեղը գրավեց ղազախ Ժանսայա Աբդումալիկը, իսկ բրոնզե մեդալը նվաճեց ռուսաստանցի Ալինա Կաշլինսկայան:**

ՖՈՒՏԲՈԼ

## Մովսիսյանը նպաստեց նախկին թիմի նկատմամբ հաղթանակին

**ՀՀ հավաքականի հարձակվող Յուրա Մովսիսյանը ՌԴ առաջնությունում 5-րդ գոլը խփեց՝ աչքի ընկնելով 10-րդ տուրում «Կրասնոդարի» հետ անցկացրած խաղում, որում «Սպարտակը» 3-2 հաշվով դժվարին հաղթանակ տոնեց: Մովսիսյանն աչքի ընկավ 27-րդ րոպեին՝ հաշիվը դարձնելով 2-1:**

**Հասկանալի է, որ իր նախկին թիմի դարպասը խփած գոլը Յուրա Մովսիսյանը չնշեց: Խաղից հետո նա այսպես է մեկնաբանել իր քայլը. «Շատ եմ հարգում «Կրասնոդարին» եւ չեմ ցանկանում ուրախությունս ցույց տալ, երբ տխրեցնում եմ նախկին ակումբիս: «Կրասնոդարի» սեփականատեր Սերգեյ Գալիցկու հետ խաղից հետո հանդիպեցի մարզադաշտում, շատ ջերմ զրուցեցինք: Մոսկվայում եւս զգում եմ նրա աջակցությունը»:**

**Ի դեպ, Գալիցկինն ոտնկայս ծափահարել էր Մովսիսյանին, երբ նա գրավել էր «Կրասնոդարի» դարպասը: Այս խաղում Մովսիսյանը փոխարինվեց 73-րդ րոպեին, իսկ Արաս Օզբիլիսը, որ նախորդ տուրում բացել էր գոլերի հաշիվը, մնաց պահեստայինների նստարանին: «Սպարտակի» գլխավոր մարզիչ Վալերի Կարպինն այսպես է բացատրել Օզբիլիսի բացակայությունը. «Օզբիլիսը ոչ միայն «Սպարտակում» է շատ խաղացել, այլեւ Հայաստանի ազգային հավաքականում: Նա թունավորվել էր, ինչ էր մնացել կոմայի մեջ հայտնվեր, սակայն հավաքականից վերադարձավ թիմ եւ 90 րոպե ծանր մրցախաղ անցկացրեց ԲԿՄԱ-ի հետ՝ բացելով հաշիվը: Ուստի այսօր նրան հանգստանալու հնարավորություն ընձեռեցինք, հաշվի առնելով նաեւ, որ առջեւում «Զենիթի» հետ հանդիպումն է»:**

**Այս հաղթանակից հետո «Սպարտակը» 23 միավորով «Զենիթի» հետ գլխավորում է մրցաշարային աղյուսակը: 21 միավոր ունի ԲԿՄԱ-ն, որը գոլազուրկ ոչ-ոքի խաղաց «Անժիի» հետ: Վերջինիս կազմում խաղադաշտ դուրս չեկավ Կառլեն Մկրտչյանը:**



## Աբրահամի մրցակիցը հայտնի է

Պրոֆեսիոնալ բռնցքամարտի WBO-ի վարկածով 2-րդ միջինքաշային կարգում աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդ Արթուր Աբրահամը հոկտեմբերի 26-ին Գերմանիայի Օլդենբուրգ քաղաքում կմենամարտի իտալացի Ջովանի Դե Կարոլիսի հետ: Վերջինս պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 24 մենամարտերից 20-ում հաղթել է, 4-ում պարտվել:

## Լավագույնը Յայլոյանի եւ Պետրոսյանի արդյունքն է

Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում մեկնարկել է արագ շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնությունը: 5 տուրից հետո առաջնության մասնակից 7 հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն մինչեւ 14 տարեկանների մրցաշարի մասնակից Կոնստանտին Յայլոյանը եւ մինչեւ 16 տարեկանների մրցապայքարին մասնակցող Մանուել Պետրոսյանը, որոնք վաստակել են 4-ական միավոր: Ընդ որում Մանուելը առաջատարներից մեկն է: 4 միավոր ունեն նաեւ բելառուս Վալենտին Եժելը, ռուսաստանցի Կիրիլ Ալեքսեենկոն ու լիտվացի Տիտաս Ստրեմավիչյուսը:

Մինչեւ 14 տարեկանների մրցաշարում առաջատարը 100 տոկոսանոց արդյունք ունեցող ռուսաստանցի Թիմուր Տրուբչանինովն է:

Մինչեւ 12 տարեկանների մրցաշարում Շանթ Սարգսյանը 3 միավորով ընթանում է 10-րդ տեղում: Արթուր Դավթյանը 2 միավորով 22-րդ տեղում է:

Մինչեւ 14 տարեկանների մրցաշարում Հայկ Մարտիրոսյանը 3 միավորով 12-րդ տեղում է: Մինչեւ 18 տարեկան պատանիների մրցաշարում Կարեն Գրիգորյանը 3 միավորով 9-րդ տեղում է: Մինչեւ 14 տարեկան աղջիկների մրցաշարում Սոնա Ասատրյանը 3,5 միավորով 4-րդ տեղում է:

## Այսօրվանից սկսվում է տոմսերի վաճառքը

**Հոկտեմբերի 11-ին ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը 2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում սեփական հարկի տակ վերջին հանդիպումն է անցկացնելու՝ հյուրընկալելով Բուլղարիայի ընտրանուն: «Հանրապետական» մարզադաշտում ժամը 19-ին սկսվելիք այդ հանդիպման տոմսերի վաճառքը կիրականացվի այսօրվանից: Արեւմտյան տրիբունայի տոմսի արժեքը 8 հազար դրամ է, արեւելյանինը՝ 5 հազար: Մյուս 2 տրիբունաներում տեղ զբաղեցնելու համար ֆուտբոլասերները պետք է 3 հազար դրամ վճարեն:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Orange-ը ներկայացրեց երկու նորարարական նախաձեռնություն

## «Ինտերնետ Café» ինտերնետը ոչ մշտապես օգտագործողների համար եւ օգտագործված մոդեմների վերամշակում




Orange-ը ներկայացրեց նոր կանխավճարային սակագնային պլան նրանց համար, ովքեր ինտերնետի կարիք ունեն միայն ժամանակ առ ժամանակ եւ այն չեն օգտագործում մշտապես: Ինտերնետ Café առաջարկը, որը հասանելի կլինի Հայաստանի մարզերի բնակիչների համար, բաժանորդներին հնարավորություն կտա ինտերնետից օգտվելու մինչեւ 1 Մբ/վ արագությամբ՝ վճարելով միայն օգտագործված րոպեների համար՝ ընդամենը 1 դրամ/րոպե սակագնով:



«Սա նորարարական առաջարկ է Հայաստանի շարժական ինտերնետի շուկայում: Այն նախատեսված է՝ բավարարելու այն մարդկանց յուրահատուկ պահանջները, ովքեր ինտերնետի կարիք ունեն, սակայն ոչ մշտապես: Դեռ կան մարդիկ, հատկապես մարզերում, ովքեր տանը չունեն ինտերնետ եւ ինտերնետ-սրճարաններ են այցելում համացանց մուտք գործելու համար: Այս նոր սակագնային պլանով մենք իրականում տեղափոխում ենք ինտերնետ սրճարանը յուրաքանչյուր բաժանորդի տուն, այնպես որ վերջիններս կարող են նորություններ կարդալ, իրենց բարեկամների ու մտերիմների հետ Skype-ի, Odnoklassniki-ի, Facebook-ի կամ այլ սոցիալական ցանցերի միջոցով շփվել ցանկացած պահի», ասաց Օրանժ Արմենիայի մարկետինգի տնօրեն **Արամ Մկրտչյանը**:

Ինտերնետ Café կանխավճարային սակագնային պլանից օգտվելու համար բաժանորդները կվճարեն 100 դրամ միացման վճար, որը թույլ կտա ծառայությունից օգտվել մինչեւ այդ օրվա վերջը: Ինտերնետ Café հաշիվը կարելի է լիցքավորել լիցքավորման քարտերով, էլեկտրոնային լիցքավորման միջոցով, վճարման տերմինալներով, կամ այցելելով Orange-ի խանութներ, Հայփոստի մասնաճյուղեր եւ այլն:

Այս մարկետինգային նորարարությանը զուգահեռ՝ Orange-ը նաեւ հայտարարեց մեկ այլ կարեւոր նախաձեռնության մասին: Որպես պատասխանատու ընկերություն՝ Orange-ը հոկտեմբերի 1-ից կսկսի հետ գնել եւ վերամշակել օգտագործված Ինտերնետ Հիմա մոդեմները: Այս նախաձեռնության շրջանակներում Orange-ի այն բաժանորդները, ովքեր նախկինում ձեռք են բերել Ինտերնետ Հիմա մոդեմ, սակայն այժմ չեն օգտագործում, կարող են իրենց մոդեմը բերել Orange-ի խանութ եւ ստանալ 3000 դրամ կանխիկ գումար: Այս մոդեմները խնամքով կթարմացվեն, որից հետո կրկին շահագործման կհանձնվեն:

Այսպիսով, Orange-ի բաժանորդները ոչ միայն կստանան որոշակի գումար իրենց համար արդեն ոչ պիտանի սարքի համար, այլ նաեւ կմասնակցեն այդ սարքերի վերամշակմանը՝ դրանով իսկ աջակցելով բնության պահպանմանը: Հոկտեմբերի 1-ից օգտագործված մոդեմներ կընդունեն Orange-ի մի քանի խանութներ, իսկ հետագայում դրանց թիվը կմեծանա:

«Սարքերի վերամշակումը շատ կարեւոր ուղղություն է բնության պահպանման ու ռեսուրսների ճիշտ օգտագործման համար: Կարեւոր է գիտակցել, որ սարքավորումը պարզապես մի կողմ նետելով՝ մենք անուղղակի կերպով վնաս ենք հասցնում բնությանը: Այսօր մենք առաջարկում ենք մեր բաժանորդներին այս գիտակցությամբ մոտենալ հարցին, երկրորդ կյանք տալ իրենց մոդեմներին, եւ միեւնույն ժամանակ դրա համար խրախուսական գումար ստանալ Orange-ի կողմից: Սա շատ ընդունված մոտեցում է տարբեր արեւմտյան երկրներում եւ ուրախ ենք, որ մենք ենք այն առաջին անգամ իրագործում Հայաստանում», ասաց Օրանժ Արմենիայի գլխավոր տնօրեն Ֆրանսիս Ժելիբտերը:

Նախագիծը, որը փորձնական է, հնարավորություն կտա Orange-ի բաժանորդներին իրենց չօգտագործվող, սակայն սարքին վիճակում գտնվող մոդեմները վերադարձնել մինչեւ 2013թ. վերջը:

Երկու նախաձեռնությունների մասին բոլոր մանրամասները կարելի է գտնել Orange-ի վեբկայքում www.orangearmenia.am:


## Վաճառվում է

ավտոմեքենա «Daewoo Matiz» 2009 թ., փոխանցման տուփը՝ մեխ., շարժիչը՝ 0,8 լ բենզին, վազքը՝ 93000 կմ, CDMP3 մագնիտաֆոն «Clarion», անվադողերը նոր են, մեքենան գտնվում է գերազանց վիճակում: Գինը՝ 4000 $-ին համարժեք դրամ: Հեռ. (077) 700-710:

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

չեխական «Կարմա» գազի վառարան

Հեռ.՝ 094-48-68-03

## ՇՏԱՊ վաճառվում կամ վարձով է տրվում

քարե ավտոտնակ ՀԱԹ Բ-4 թաղ.-ում, առանց միջնորդի Հեռ.՝ 077-06-28-48, 055-06-28-48

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730


ՉԻՆԱՍՏԱՆ

# Գյումրու քաղաքապետը ելույթ է ունեցել «Եվրասիական տնտեսական ֆորում 2013»-ում

**Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանը երեկ ելույթ է ունեցել Չինաստանի Սիան քաղաքում բացված «Եվրասիական տնտեսական ֆորում 2013»-ի առաջին նիստում: Այս մասին քաղաքապետարանի հրապարակած պաշտոնական հաղորդագրությունում նշվում է, որ ֆորումին մասնակցելու հրավիրված հայ քաղաքապետը հանդես է եկել բացման հանդիսավոր մասի ավարտից հետո: Բացմանը հանդես են եկել ՉԺՀ կենտրոնական եւ տեղական իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ, Աֆղանստանի նախագահը, Ուկրաինայի փոխվարչապետը եւ ուրիշներ:**

**Բալասանյանն իր ելույթում հայ-չինական հարաբերությունների համատեքստում մանրամասն ներկայացրել է Գյումրիում չինական եւ այլ աղբյուրների ներդրումների համար առավել հավանական ուղղությունները, որոնց շարքում առանձնացրել է այլընտրանքային էներգետիկայի, բարձր տեխնոլոգիաների, տեքստիլ արդյունաբերության եւ սպորտի ոլորտները:**

**Նշվում է, որ օրվա ընթացքում Գյումրու քաղաքապետը ծրագրային հանդիպումներից զատ քննարկումներ է ունեցել Ուզբեկստանի, Թուրքմենստանի եւ Չինաստանի մի շարք քաղաքների իր պաշտոնակիցների հետ, կողմերը մտքեր են փոխանակել քաղաքների միջեւ համագործակցության հնարավոր ձեւաչափերի, տարբեր ոլորտներում փորձի փոխանակման հնարավորությունների մասին:**

**Գ. Մ.**

# Ի՞նչ է ակնարկել Մամեդյարովը

*1-ին էջից*

**Վերջերս միջազգային մամուլում հրապարակումներ եղան, որ Եվրոմիությունը «հիասթափված է, քանի որ տեղեկություններ կան, որ Ադրբեջանը պատրաստվում է իր մասնաբաժինը կիսել Ռուսաստանի հետ, որն արդեն իսկ 10 տոկոսի մասնակցություն ունի «Հարավային գազային միջանցք» նախագծում»: Բրյուսելում մտահոգություններ կան, որ ռուսաստանյան «Գազպրոմը» բանակցում է նաեւ նորվեգական ընկերությունների հետ՝ նշյալ նախագծում վերջիններիս մասնաբաժինը ձեռք բերելու նպատակով:**

**Մինչդեռ իրողություն է, որ «Հարավային գազային միջանցքը» ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական նախագիծ է, որով Եվրոմիությունը ձգտում է մասնակիորեն թոթափել Ռուսաստանից էներգակախվածությունը: Եթե «Գազպրոմ»-ին հաջողվի ադրբեջանական եւ նորվեգական կողմերի հետ ավարտին հասցնել բանակցությունները եւ, ինչպես մեկնաբաններն են կարծում, «եռապատկի «Հարավային գազային միջանցք» ծրագրում իր մասնակցությունը», ապա Եվրոմիությունը քաղաքական իմաստով գրեթե ոչինչ չի շահի:**

**Այս եւ այլ հարցերի շուրջը Մամեդյարովը բացատրություններ տվե՞լ է, թե՞ ոչ՝ հայտնի չէ: Ադրբեջանական աղբյուրներն առանձնացրել են նրա խոսքի հետեւյալ հատվածը. «Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ տարածաշրջանային հակամարտությունը սառեցված չէ: Այդ հակամարտությունը շինարարության (դեպի Եվրոպա գազատարի-Վ. Ա.) ճանապարհին կարող է խնդրահարույց լինել»: Շարունակելով միտքը՝ Մամեդյարովն ասել է, որ «պաշտոնական Բաքուն պատրաստ է օգնել Հայաստանին, եթե Երեւանը հետեւի միջազգային նորմաներին, իսկ հետո կարող է միանալ նախագծին»:**

**«Միջազգային նորմերին հետեւելու» մասին Մամեդյարովի ասածը թերեւս մեկնաբանելու կարիք չկա: Պարզ է, թե այդ ձեւակերպման տակ ինչ են նկատի ունենում Ադրբեջանում: Բայց որ «հակամարտությունը գազատարի շինարարության ճանապարհին կարող է խնդրահարույց դառնալ», սա արդեն բավական հետաքրքրական միտք է: Դա կարելի է հասկանալ այնպես, որ «քանի դեռ հակամարտությունը կարգավորված չէ, գազատարի շինարարությունը չի սկսվի»:**

**Այս դեպքում ստացվում է, որ Մամեդյարովը շահագրգիռ կողմերին կոչ է անում «արագացնել հակամարտության կարգավորումը, ընդ որում՝ Ադրբեջանի համար ընդունելի տարբերակով»: Չի բացառված, որ Ադրբեջանի ԱԳ նախարարը քողարկված սպառնալիք է հնչեցրել, որ «հակամարտությունը սառեցված չէ, հնարավոր է, որ վերստին բորբոքվի, իսկ այդ դեպքում կարող է վտանգվել գազատարը»:**

**Կա նաեւ երրորդ հավանականությունը: Միջազգային մամուլում «Հարավային գազային միջանցքի» կառուցման նախագիծը գնահատվել է «չափազանց ծախսատար»: Ադրբեջանական կողմը պնդում է, որ գազատարը պետք է անցնի Վրաստանի տարածքով: Միաժամանակ, սակայն, Բաքուն չի պատրաստվում ներդրումներ անելու գազատարի կառուցման ծրագրում: Բացառված չէ, որ եվրոպական ներդնողները քննարկել են գազատարը Հայաստանի տարածքով անցկացնելու տարբերակը, որը կարող է զգալիորեն էժան լինել: Այս դեպքում Մամեդյարովի ասածից ենթադրվում է, որ «դա հնարավոր է հակամարտության կարգավորումից հետո:**

**Այս ենթադրության օգտին է խոսում Ադրբեջանի ԱԳ նախարարի վերջին ընդգծումը. «Եթե ծրագիրն ավարտվի 2019-ին, ապա հաջորդ տասնամյակում Ադրբեջանը դրանից ավելի մեծ շահույթ կստանա՝ հօգուտ պետության եւ մարդկանց»: Թեականորեն խոսել մի ծրագրի հաջողության մասին, որով հետաքրքրված են Եվրոմիությունը եւ Միացյալ Նահանգները, նշանակում է ունենալ լուրջ վերապահումներ դրա քաղաքական նպատակահարմարության մասին: Ադրբեջանի ԱԳ նախարարը փաստորեն այդ վերապահումն արել է:**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 26.9.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: